Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ (Պ-375-15.11.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	*ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ*
1.	Կառավարություն	Նախագիծ	Նախագծում «ձայնագրել և տեսագրել» բառերը փոխարինել «տեսաձայնագրառել» բառով՝ դատավարության մասնակիցների համար ապահովելով հավասար պայմաններ:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	Հեղինակ	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված Օրենսգրքի 209-րդ հոդվածի 31. Մասի վերջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ. «Հարցաքննության ընթացքի	Ընդունվել է	Ընդունվել է

			տեսաձայնագրառման նյութական կրիչի կրկնօրինակը դատավարության մասնակիցներին օրենքով սահմանված կարգով տրամադրվում է՝ քրեական գործի նյութերին ծանոթացնելու ընթացքում:»:		
3.	Կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված, 1-ին մաս	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված Օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին մասում «ցուցմունքների» բառից հետո լրացնել «տեսաձայնագրառումների,» բառը:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	Կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված , 2-րդ մաս	Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված Օրենսգրքի 337-րդ հոդվածի 2-րդ մասում «ցուցմունքների» բառից հետո լրացնել «տեսաձայնագրառման կամ» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	Կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված, 1-ին մաս	Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված Օրենսգրքի 342-րդ հոդվածի 1-ին մասում ՝ «ցուցմունքների» բառից հետո լրացնել «տեսաձայնագրառման և» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է

6.	Կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված, 2-րդ մաս	Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված Օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «ցուցմունքների» բառից հետո լրացնել «տեսաձայնագրառման կամ» բառեր:	Ընդունվել է	Ընդունվել է
7.	Հեղինակ	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծում ավելացնել 3-րդ հոդված նոր բովանդակությամբ. «Օրենսգրքի 216-րդ հոդվածը լրացնել նոր բովանդակությամբ 2.1 մասով. «2.1. Եթե քննչական գործողության մասնակիցները և քննիչը չեն առարկում, ապա առերեսումը կատարվում է սույն օրենսգրքի 209-րդ հոդվածի 3.1-րդ մասով սահմանված կարգով:»: Հոդվածի նպատակն է սահմանել նախագծով նախատեսված կարգավորումները նաև առերեսում քննչական գործողության կատարման համար:	Ընդունվել է	Ընդունվել է
8.	Հեղինակ	Նախագծի 2-րդ	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ	Ընդունվել է	Ընդունվել է

		հոդված, 2-րդ մաս	մասով նախատեսված Օրենսգրքի 209-րդ հոդվածի 3.1 մասում «քրեական հետապնդման մարմինները» բառերը փոխարինել քննիչը բառով:		
9.	Հեղինակ	Նախագիծ	Նախագծում հեղինակի կողմից իրականացվել են մի քանի ոչ բովանդակային տեխնիկականփոփոխություններ:	Ընդունվել է	Ընդունվել է